Այսու ծանուցանի ի գիտութիւն Տեսչութեանց և աւարտողաց ի Թեմական Հոգևոր դպրանոցս, թէ՝ կարևոր առարկայք յորս ունին քննիլ ցանկացողք ի մտանել յառաջին Լսարան Ճեմարանիս, հետևեալքն են։

**ԿՐՕՆ**

1. Եկեղեցական Պատմութիւն Հայոց, ընդարձակ։
2. Քրիստոնէական Վարդապետութիւն Հայ եկեղեցւոյ, ընդարձակ։
3. Սրբազան Պատմութիւն Հին և Նոր Կտակարանի, ընդարձակ։
4. Ծանօթութիւն Աւետարանացն Ղուկասու, Յովհաննու և Գործոց Առաքելոց։

**ԼԵԶՈՒՔ**

1. Հայոց լեզու, գրաբառ շարադրութիւն։
2. Ռուսաց լեզու, շարադրութիւն։
3. Ֆրանսերէն լեզու, թարգմանութիւն։

Նիւթք ըստ դըպրոցական ծրագրի։

Այսոքիկ առարկայք նշանակեալ են վասն այնոցիկ, որք ստացեալ գոլով վկայական աւարտման դպրոցական ընթացից ցանկան մտանել ի Ճեմարան մինչև անցեալ իցէ առաւել քան զամ մի ի թուականէ ստացմանն վկայականի. իսկ եթէ առաւել քան զամ մի անցեալ իցէ ի վերայ, յայնժամ ունին քննիլ յամենայն առարկայս դպրոցական ընթացից, ըստ 7-րդ յօդուածոյ ծանուցման Վարչութեանս։

ՏԵՍՈՒՉ ՃԵՄԱՐԱՆԻ՝ ՍԱՐԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ.

---

Լոյս տեսաւ և վաճառվում է, Մոսկվայում տպագրված

„ՍՈԽԱԿ“

Ազգային լիակատար երգարանի

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԸ

Գինն է 1 ր. Բագուի մէջ, իսկ գրսի քաղաքների համար 1 ր. 20 կ.։

Հասցէն՝ Священнику Григорію Григоріянцъ, Баку.

# ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ-ՎԱՐՉԱԿԱՆ

## Յ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ի Ց·

1891 թուի մայիսի 3-ին կայացած Սինոդի օրագրութեան պատճէնը Ուսումնարանական-Վարչական Յանձնաժողովիս առաքուեցաւ ի գիտութիւն և ի պարտուպատշաճն տնօրէնութիւն։ Յանձնաժողովս այսու յայտարարէ, թէ այսուհետև մինչև ամբառնալն ընտրելի Քահանայապետի ի փառաւորեալ Գահ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի՝ ա) այլ ևս նորոգ ծխական ուսումնարաններ չը պէտք է բանալ· բ) հաստատուած հոգաբարձուները պէտք է շարունակեն իրանց պաշտօնը· գ) ցուցակի մէջ նշանակած ուսուցիչները և ուսուցչուհիները անփոփոխ մնալու են իրանց պաշտօնութիւնները, բացի նոցանից, որոնք միայն մի տարով պաշտօնութիւն են ստացել· դ) ուսուցիչների նոր ցուցակ չի տպագրուիլ· ե) այն անձանց անունները, որոնք վերջին տարին ինքնագլխաբար լինելով հոգելոյս Հայրապետին արժանացել են նորին վեհափառութեան շնորհին, բայց տակաւին չեն մտած ցուցակի մէջ՝ առանձին թղթով կը ծանուցանուին Վիճակաւոր Առաջնորդներին· զ) պետական և ազգային դպրոցների նորաւարտները, երբ [illegible] և ցանկան հայոց ծխական ուսումնարաններում ուսուցութեան պաշտօն վարել, պէտք է դիմեն տեղական Վիճակաւոր Առաջնորդներին, որոնք, եթէ հաւանութիւն տան՝ իրանց կողմից պէտք է նոցա վաւերական պաշտօնագրերը Յանձնաժողովիս առաքեն, որպէս զի Հոգելոյս Հայրապետի կանոնաց և հրահանգաց համեմատ ստուգուին և պաշտօնի մէջ նոցա նշանակուելու մասին Կովկասեան ուսումնարանների Հոգաբարձուին կանխաւ տեղեկութիւն տրուի։

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

## ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ԵՒ ԱՊԱՀՈՎԱԾ ԲԱՆԴԵՐՈԼՈՎ ՈՒՂԱՐԿՎԵՑԱՒ ԲՈԼՈՐ

ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ

## ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԲԺՇԿԱՐԱՆԻ

Ա ռ ա ջ ի ն  հ ա տ ո ր ի

ԱՌԱՋԻՆ ՏԵՏՐԱԿԸ.

*Բովանդակութիւն:* *Ազդ.* — *Յառաջաբան.* — *Միկրօբներ.* — *Դէզինֆէկցիական միջոցներ և նրանց գործածութեան եղանակը.* — *Սրընթաց ցանակից կարմրախտներ:* 1) *Քութէշ* (скарлатина). 2) *Կարմրուկ.* (корь). 3) *Կեղծ կարմրուկ* (краснуха). 4) *Ծաղիկ* (оспа). 5) *Ծաղկի պատուաստումը* (оспопрививаніе). 6) *Ջրծաղիկ* (вѣтряная оспа). 7). *Քութէշ, կարմրուկ և ծաղիկ հիւանդութիւնների գլխաւոր որոշիչ յատկութիւնները.* 8) *Կարմիր քամի* (рожа). 9) *Բծաւոր տիֆ* (сыпной тиф).

*Առաջին տետրակի գինն է* 70 *կոպ. ամենայն տեղ: Մի օրինակ պահանջողները փողի փոխարէն կարող են ուղարկել երեսուն և հինգ հատ երկու կոպէկանոց մարկա:*

*«Հանրամատչելի բժշկարանը» կը հրատարակւի երկու հատորով, իւրաքանչիւր հատորը բաղկացած կը լինի* 22—23 *տպագրական թերթից* (44 *տող իւրաքանչիւր երեսում* 6½ *կվադրատ տողերի երկայնութիւնը* № 10 *տառերով*):

*Բաժանորդագրութիւնը շարունակւում է.* 45 *թերթից* 720 *երեսից բաղկացած երկու հատորի գինը* ԵՐԵՔ *ռուբլի է: Մեր բաժանորդները հրատարակութիւնը կը ստանան մաս-մաս* 5—8 *թերթ. իւրաքանչիւր տետրակում:*

*Առանձին տետրակները կը վաճառւեն թերթը* 10—15 *կոպ. հաշւելով:*

*Մեր հասցէն.* **Въ** гор. Тифлисъ, Доктору Медицины Григорію Никитичу Тер-Григорьянцъ. Саперная улица, № 7.

*Բժշկապետ Գրիգոր Տէր-Գրիգորեանց (Թիֆլիսեցի).*